# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

378410, ք. Աշտարակ, Տիգրան Մեծի 65; հեռ. (0232) 3-21-31; էլ. հասցե՝aragatsotn@court.am, www.court.am

N ԴԴԱ-12 Ե 5842 /26
«23» 07 2026թ.

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ,
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
1-ԻՆ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ
ՊԱՐՈՆ ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գալստյան

Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և «Հայփոստ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրին կից կնքվել է լրացուցիչ համաձայնագիր, որի արդյունքում փոստային կապի ծառայությունների մատուցման թիվ PDU-22-01-26 պայմանագրի գումարը ավելացել է և կազմել 21531600 (քսանմեկ միլիոն հինգ հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը՝ վերոնշյալ պայմանագրին կից կնքված համաձայնագրին եզրակացություն տալու համար:

Կից ներկայացվում է թիվ 1 լրացուցիչ համաձայնագրի պատճենը:

Հարգանքով՝

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Գ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝
Գլխ. հաշվապահ Մ.Մալխասյան
Հեռ. 0232-3-21-31

**Լրացուցիչ համաձայնագիր թիվ**
03.02.2026թ.-ին կնքված թիվ PDU-22-01-26
Փոստային ծառայությունների մատուցման
պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք. Երևան**

**22.07.2026թ.**

«ՀԱՅՓՈՍՏ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցված է և գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0061, Արշակունյաց 65/5 հասցեում և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի նշանակված ազգային օպերատոր (այսուհետ նաև՝ «Ընկերություն»)՝ ի դեմս Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և վաճառքների զարգացման վարչության ղեկավար Գուրգեն Բաղդասարյանի, մի կողմից, ով գործում է Ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ 26.06.2026թ.-ի թիվ Լ-ԵԼ-ՀՓ/222-26 Լիազորագրի հիման վրա և ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ նաև՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու»)՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար Արթուր Միլիտոնյանի, մյուս կողմից, (այսուհետ Ընկերությունը և Հաճախորդը միասին կհիշատակվեն որպես «Կողմեր») կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Ընկերությունը և Հաճախորդը համաձայնության են գալիս 03.02.2026թ.-ին կնքված թիվ PDU-22-01-26 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Պայմանագրի 3.3 կետով սահմանվում է բառից հետո 13 000 000 (տասներեք միլիոն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն բառերը փոխարինել 21 531 600 (քսանմեկ միլիոն հինգ հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ բառերով:
2. Սույն լրացուցիչ համաձայնագիրը հանդիսանում է 03.02.2026թ.-ին կնքված թիվ PDU-22-01-26 Փոստային կապի ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
4. Սույն լրացուցիչ համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից: Համաձայնագրի 1 (մեկ) օրինակը մնում է Ընկերության մոտ, իսկ 1 (մեկ) օրինակը տրվում է Հաճախորդին:
5. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

| **ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ՝** | **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝** |
|---|---|
| «Հայփոստ» ՓԲԸ | Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան |
| ք. Երևան, 0061, Արշակունյաց 65/5 | ք. Աշտարակ, Տիգրան Մեծի 65 |
| ՀՎՀՀ՝ 02507464 | ՀՎՀՀ՝ 02583241 |
| «Կոնվերս Բանկ» ՓԲԸ | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| Հ/Հ՝ 1930003703156000 | Հ/Հ՝ 900441001634 |
| Հեռ.՝ (010) 544-444 | Հեռ.՝ (0232) 3-21-31 |
| Կորպորատիվ Հաճախորդների սպասարկման և վաճառքների զարգացման վարչության ղեկավար՝ | Աշխատակազմի ղեկավար՝ |
| ________ Գուրգեն Բաղդասարյան | ________ Արթուր Միլիտոնյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |